ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ք.Եղեգնաձոր 26 փետրվարի 2018թ.

ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը և հանձնաժողովի անդամները:

Նիստին հրավիրված է Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագիրը:
2. Մարզի զբաղվածության կենտրոնների կողմից նախատեսված աշխատանքները՝ 2018 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ /զեկ. Եղեգնաձորի զբաղվածության ծառայության կենտրոնի տնօրենի տեղակալ Սամվել Ավետիսյան/:
3. Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալների ձևաչափերը/զեկ.Ց.Բաբայան/
4. <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի կատարման ընթացքը 2017 թվականին և 2018 թվականին նախատեսված միջոցառումները:
5. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018 թվականի տարեկան ծրագրով նախատեսված աշխատանքները:
6. Ընթացիկ այլ հարցեր

Քննարկեցին՝ Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց ՀՀ Վայոց ձորի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագիրը :

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ նախատեսված աշխատանքների մասին ներկայացրեց Սամվել Ավետիսյանը:

Քննարկվեց նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018 թվականի տարեկան ծրագիրը և նախատեսվող միջոցառումները, տրվեցին հանձնարարականներ :

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրով>> նախատեսված 2017 թվականնին կատարված աշխատանքները և 2018 թվականին նախատեսված աշխատանքները:

Ց.Բաբայանը ներկայացրեց վիճակագրական ձևաչափերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հսկողություն սահմանել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2018 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքին:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում իրազեկման աշխատանքներ տանել զբաղվածության ծրագրերի վերաբերյալ՝ մամուլի, համացանցի և շահագրգիռ հասարակական կազմակերպությունների միջոցով:
3. ՀՀ կառավարության 2017թվականի հունվարի 12-ի նիստի N 1 արձանագրային որոշմամբ հաստատված <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրը և միջոցառումների ցանկը >> մարզի ՀԿ-ների հետ համատեղ ներկայացնել բոլոր շահագրգիռ կողմերին՝ մամուլի, համացանցի և քննարկումների միջոցով:
4. Վիճակագրական ձևաչափերը ներկայացնել ՀՀ ԱՍՀՆ:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան
Քարտուղար Ց.Բաբայան
26.02.2018թ.